



20. ԴԱՐՎԵՇԻ ՈՒ ԱՂՋԸԿՆԵՐՈՒ ՀԵՔԻԱԹ

Կէղնի, չէղնի կնիկ մե կէղնի, էդ կնկան իրեք աղջիկ կէղնի:
Դարվեջ կէրթա զմեծ աղջիկ գուղե ուրին, կը տանե ուր տուն, օր կը
տանե տուն, կտոր մե հում միս կիտա, կըսե.

— Իդա կտոր հում միս պտի ուտիս, թե կերար՝ իմ կնիկն իս,
թե չըկերար՝ զքզի կը խեղդիմ, տանիմ կախիմ հորեն:

Աղջիկը կըսե.

— Քու յառջև չըմ կոնա ուտի, դու գնա դուս, ես կուտիմ:

Դարվեջ օր կէրթա դուս, աղջիկ դմիս կը տանե կոխե թունդրա
ակ: Գիկա կը հարցու.

— Աղջի՛, զմիս կերա՞ր:

— Հա՛, կերա,— կըսե աղջիկ:

Դարվեջ կը հարցու.

— Մի՛ս, յո՞ւր իս:

Միս ձեն կիտա.

— Հանդե թունդրա ակն իմ:

Դարվեջ ղաղջիկ կը խեղդե, տանե կախե հորեն. կէրթա միջնեկ
աղջկան կըսե.

— Քու քուր հիվանդ է, արի պահե, հարի աղեկնա:

Միջնեկ քուր գընկնա դարվեջի յետև կէրթա ընդրա տուն:

— Աղջի՛,— կըսե դարվեջ,— իդա կտոր միս պտի ուտիս, թե
չը կերար՝ քզի լե քու քրոջ պես խեղդիմ, կախիմ հորեն:

Աղջիկ կըսե.

— Դու դնա դուս, ես կուտիմ. քու յառջև չըմ կոնա ուտիք
Դարվեջ կէրթա դուս, աղջիկ զմիս կը տանն կոխե պատի ծակը
Դարվեջ կը դառնա գիկա կը հարցու.

— Աղջի՛, զմիս կերա՞ր:

— Կերա, — կըսե աղջիկ:

— Մի՛ս, յո՞ւր իս, — կը հարցու դարվեջ:

— Հանդե պատի ծակն իմ, — ձեն կիտա միս:

Դարվեջ զաղջիկ կը խեղդե, տանն կախե հորու մեջ, սորա գի-
կա պղտիկ աղջկան կըսե.

— Քու քուրվըտիք հիվանդ ին, արի տես:

Աղջիկ կըսե.

— Դու դնա, ես էրթամ ըսթնենն էրկու ձմերուկ առնիմ, գա՛ւ
դիմ քուրվըտիք տեսնամ: Աղջիկ օր կէրթա ըսթան, ըսթնչին կըսե.

— Աղջի, տնավեր, էդ դարվեջ սերրազ է, կը տանն դքըղի լե
քու քուրվտոց պես խեղդե. հանդե զէրկուս լե խեղդեր է, կախեր է
մըջ հորուն, թե կէրթաս լե, կատվի մե ձագ դիր ծոցդի ու դնա:
Դարվեջ քըղի հում միս օր կիտա, դու զմիս տուր ձըգուն ու պահն
մըջ ծոցդ ի, բալթի զհոգիդ ի խլըսցուս ուրնե:

Աղջիկ կառնե էրկու ձմերուկ, զկատվի ձագ կը դնե ծոց, կէրթա
դարվեջի տուն: Քուրվտիք չկան: Դարվեջ զաղջկա ձեռք կը բռնե,
կը տանն կանգըցու վըր հորուն, կըսե.

— Կը տեսնա՞ս, ըդոնք քու քուրվըտիքն ին. ա՛ն գիդա կտոր
միս, կի՛, թե կերար՝ դու իմ կնիկն իս, թե չըկերար՝ դքըղի լե կը
խեղդիմ, բերիմ կախիմ մըջ հորուն:

Աղջիկ կըսե.

— Քու յառջև չըմ կոնա ուտի, խնդիրք կէնիմ քըզնե, գնա դուս:
Աղջիկ զմիս կիտա կատվին, կուտե, սորա կը դնե վըր սրտին
կատվի ձագ, սրտանոց կը կապե, օր դարվեջ չը տեսնա: Փշու մե
կը մնա, դարվեջ գիկա կը հարցու.

— Աղջի՛, զմիս կերա՞ր:

— Հա՛, կերա, — կըսե աղջիկ:

— Մի՛ս, յո՞ւր իս, — կը հարցու դարվեջ:

Աղջկա ծոցեն միս կըսե.

— Հանդե սև ու սիվտակ ջիգըրնեբրու մեջտեղ, մըջ փորուն իմ:

— Ապրի՛ս, — կըսե դարվեջ, — օղորդ օր զմիս կերեր իս, ես՝
քըզի իրիկ, դու՝ ընձի կնիկ: Դե, արի, ես զիմ գլուխ դնիմ վըր քու

չորքին, քառսուն օր թամ կը քնիմ, դու քու աեղևն ժաժ չի գաս, հարի կուշտ քնիմ:

Դարվեջ օր գընկնա մըջ խորունդ քնուն, աղջիկ յուշիկ մե զգուլս կը դնե վըր բարձին, կիշկե օր մըջ մուրքին խուրձ մե բալնիք կա, կառնե զբալնըքնեք, գընկնա տան լենքն ու յերկենք: Դուռ մե կը բանա՝ լիք օսկի ու արծաթ, դուռ մե կը բանա՝ մալ ու դովլաթ դիտիրուկ վըր յիրարու, գուռ մե կը բանա՝ հանդե իրեք քհել ձի կապուկ վըր մարին, մեկի առջև՝ խոտ, մեկին՝ աովուտ, մեկին լե բար: Կվերցու զքար թալե մեկ դեն, աովուտ կը քաշե յառեջ, ձին գելնա լեզու:

— Աղջի՛,— կըսե ձին,— զթագարուկտի տե՛ս, օր փախնինք հեռենանք, դարվեջն օր յիմցամ՝ ոչ դո՛ւ կը պրծնաս, ոչ ե՛ս: Մտաովիմ, տար զիս ինա աղբրի վրեն կուշտ ջուր խմիմ, զքու ձեռքեր ու ծամեր լե վլա, յլեբերգի լիք լցե օսկով ու արծըթով՝ փախնինք հեռենանք:

Աղջիկ ինչքան օր կոցավ օսկի ու արծաթ վերուց, զձին ջրեց, թամք զարկեց վրեն, զծամեր վլաց, դառձավ հուրնիկ-հրեղեն՝ օսկեծամ աղջիկ մե, հեծավ զձին ու յընկան նամպա: Էլ գեղ ու քաղաք, էլ ծով ու ցամաք չըմնաց, օր չընցան: Կէրթան, կէրթան՝ հեռու թագավորի քաղքի մե յեզր դիջնան: Աղջիկ զձիու աչքեր կը պաղե, կը իողե ուր քեֆին, յուր օր յուզենա էրթա: Ինք կը մտնա քաղքի յեղր պառվու մե տուն, բարև կիտա, բարև կառնե:

— Նա՛նե ջան,— կըսե,— ընձի չը՛ս էնի քըզի աղջիկ, անտեր ու անտիրական իմ, բուն ու բթոթք չկա ընձի, հմա էն խըդար, օր սթար մե էղնի. ընձի, սթըրվորիմ:

Ու կը հանե ճանկ մե օսկի դըլնա պառվու ձեռք:

Պառավն օսկիք կառնե, տռձիկ կը թալե, կըսե.

— Ընձի դաթի ավլատ-թավլատ չկա, էղի ընձի հողեզավակ, իմ աչքի լուսու պես քըզի պահիմ:

Օրբըզօր աղջիկ պառվու ձեռքի տակ կը քմլեր ու կը խորոտկընեք. ջուր օր կը խմեք՝ բոկնիվի կը շողեր, բաժն էր մեկ տակ ոեհան, թուխ աչքեր, օսկի ծամեր, կամար յընքնեք:

Օրերուց օր մե ձեն կը ցրվի մըջ քաղքին, թե թագաւոր դուր տղեն պտի կարգե, թութի խուշի պտի թորկին, ինչ աղջկա դլխու վրեն օր իջավ, զէնի թագավոր գուզե ուր տղին: Թութի խուշին օր կը թորկին՝ կէրթա կանի պառվու տանքին:

— Հա՛լա-հա՛լա,— կըսին մարդիկ,— շէղնի՞ թագավորի տղի խսմաթ պառավն էղնի:

Մեկ հաղ չէ, էրկու հաղ չէ, ինչ խըղար զթութի խուշին կը թող-
նեն՝ կէրթեր կը տնկվեր վըր պառվու տանքին:

— Զա՛նըմ,— ըսին,— մեկ ներս էրթանք տեսնանք ի՛նչ կա:

Կը մտնան ներս օր ի՛նչ, աղջիկ մե վըր պառվու ձեռքին խղմաթ
կէնե, ձեռքեն կը բռնին, կը հանին դուս թե չէ՝ թութի խուշին թր՛ո
գիջնա վըր աղջկա գլխուն: Խաբար կը տանին թագավորին, թա-
գավոր զուր տղեն կը ճամպե, օր զաղջիկ տեսնա, կը հավնի, չի՛
հավնի, քիչ կը մնա օր զուր խելք թռու:

— Իմն օր կա՛ է՛գ է, չկա՛ է՛դ է,— կըսե:

Թագավորի մարդիկ կըսին.

— Պառա՛վ, թագավոր ճամպեր է զքու աղջիկ գուզե, ի՛նչ
կըսիս:

— Էնի աղջիկ գինա, ես չըմ գինա, ուրնե հարցուցեք,— կըսե
պառավ:

Աղջիկ կըսե.

— Թե թագավորի տղեն զիմ ըսածն էրեց՝ կաննիմ, թե չէրեց՝
չըմ առնի:

— Ի՛նչ է քու ըսած:

— Էն յօդեն օր ես պտի ապրիմ, քառսուն դոնով ներս պա՛ի
էզնի. յօդի դուան էրկու դեն ասլան-խապլան պտի կանուկ էղնի:
մարդ իմ քերես պտի չըտեսնա՝ խենի թագավորի տղից ու իմ ջա-
ռիեստանուց:

Թագավորի մոտ շա՛տ զոր բան էր: Քառսուն դոնով ներս յօդա
կը շինին, ասլան-խապլան կը կանգըցուն վըր դուան, կէրթան
զպառվու աղջիկ կը բերին թագավորի տղին, յոթ օր, յոթ գիշեր
հարսնիք կէնին, կուրախնան:

Թըղ հարսն ու փեսեն մըջ ուրախութենին մնան, մենք էրթանք
մըտ դարվեջ: Քառսուն օր օր կը թամըմի, դարվեջ քնուց գեղնա,
կը տեսնա մըջ ուր մուրքին բալնիք չկա, կիշկե դես ու դեն, աղջիկ
լե չկա, յօդեք չըմեն վըր ուրանց ճխնին բաց: Գեղնա դուր էղած-
չէղած յմեն կէնե դանգ, կը բառնա վըր ձի ու ջորու, կէղնի թուջար
ու գընկնա դեղե-գեղ, քաղքե-քաղաք, էրկրե-էրկիր: Յուր օր կէրթա,
մալ կիտա, փարա կը ցփնե իդոր, ինոր, օր աղջկա սալըխ մե առնե,
սալըխ տվող չէղնի: Խուլասա՛ կէրթա թագավորի քաղաք, դուքսն
կը բանա, ձեն կը ցրվի մըջ քաղքին, թե հմլա ծանդը թուջար մե
էկի, էլ ինչ ըսիս օր չկա մըջ ուր դուքնին՝ աբըռմեղեն, զուգս ու
զարդարանք, ալ ու մարգրիտ:

Օրերուց օր մե դարվեջ կաննե բողչե մե լիք զուգս ու զարդա-
րանք, գինդ ու մատնիք, աղրութ ու զմրութ կէրթա կանի թագա-

վորի հարսի փանջարի տակ, ջառեք օր կը տեսնան, կը վաղին դուս,
օր կը բանան զրոզչեն՝ րևրնե ուրանց ջուր կը վաղե, վլվլուն դընկ-
նա մըջ ուրանց, կէնին օր բաղար էնին, դարվեջ կըսե.

— Հարի ձեր խանըմ չը տեսնա, չը հավնի, բան չը ծախիմ:
Ջառեք կէրթան ներս, դխանըմի չերես կառնին, զորով-խաթ-
րով զդարվեջ կը տանին ներս: Աղջիկն օր զդարվեջ կը տեսնա՝
խուզում կը կոտրի:

— Խանջո՛ւխ, — կըսի դարվեջ, — դու չըս դինա՞, օր էրկինք
չընաս, անդուդք չիջնաս, իմ ձեռքեն չըս պրծնա: Դե, շո՛ւտ, լընկի
յառիջս, օր էրթանք:

— Դու էղնիս ու քու արարիչ աստված, դարվե՛ջ, էրթանք, —
կըսե աղջիկ, — ախըր քու ձեռքեն չաղատվա:

Դարվեջ գընկնա յառեջ, ինք կը մնա չետե, օր կը հասնին
դռան մոտ՝ աղջիկ մըջ ուր մտաց կըսե. «Յա՛ սիվտակ ձիավոր սըբ
Սարգիս, իդա իմ արդանեն ինչ օր էղավ, քըղի մատաղ ըխտացի».
ու ա՛ն հա՛ լանգե մե վըր դարվեջի միջաց կը զարկե: Դարվեջ ափալ-
թափալ վըր քիթ ու բերնին օր գընկնա, ասլան մեկ դիեն, խաւլան:
մեկ դիեն զդարվեջ կը ճղրտին, կէնին կտոր-կտոր, աղջկա հողի:
կազատվի:

Թագավորի հարս ծոցվոր՝ վըր օրերուն կէղնի, կը պարկի բերե
աղջիկ մե: Օր կազատվի՝ էլման կը ըխտա սըբ Սարգիս, կըսե.

— Իմալ օր ըխտացեր իմ՝ իդա իմ աղջիկ քըղի մատաղ:

էդ աղջիկ կը մեծնա կէղնի յոթ-ութ տարեկան, օր մե զննա
տեսնա, օր սիվտակ մորուք հալվոր մե կանուկ է մըջ փողնեքուն,
հմա կը վաղե ուր մամուն խարար կիտա, մամ կըսե.

— Գնա կանչե ներս, մեռնիմ ուր զորաց, սըբ Սարգիսն է:

Աղջիկ կէրթա կը բռնե հալվորու ձեռք, օր տանե ներս, հալվա:
կոռնն զաղջիկ.

«Ամուսն ծիծղաս՝ ճուն թորթրա,
Ձմուսն ծիծղաս՝ վարդ մորմրա,
Աչ չոտք թալիս՝ օսկի թափի,
Ձախ չոտք թալիս՝ արծաթ թափի»:

Կըսե ու կէղնի աներևութք:

Աղջիկ կը մեծնա, կէղնի կարգվելու, աչ չոտքն օր կը թալե՝
օսկի կը թափի, ձախ չոտքն օր կը թալե՝ արծաթ կը թափի, էնդախ
օր կը ծիծղա՝ պատ ու չառիք կը ծածկվին վարդ ու ուհանով: Ձեն
կը ցրվի ախըրն ախշար:

Հեռու էրկրեն թագավոր մե կը ճամպե զէդ աղջիկ գուզե ուր
տղին: Աղջկա չոտ ու ձեռք կը տեսնան, ջհեզ կը պատրաստին,

ջառի մը լե կը դնին հետ, կը ճամպին էրթա: Էդ շառին գողտուկ գուր աղջիկ էլ կը տանն հետ: Ճամպեն անջուր տեղրանով գընցներ, ջուր չը ճարվեր, թագավորի աղջիկ կը ծառվընա, ուր շառին կըսե.

— Յամա՛ն, պուտ մե ջուր ընծի հասու, իմ բերան շորցեր է: Զառին կէրթա, քիչ մե կը մնա, գիկա կըսե.

— Թըղ թագավորի աղջիկ գուր աչքեր հանն տա, օր ջուր տանք:

Աղջիկ կըսե.

— Անաչք կապրիմ, անջուր չըմ կոնա ապրի, արի զիմ աչքեր հանն տար, մինակ՝ պուտ մը ջուր հասու:

Զառին զաղջկա էրկու աչքեր կը հանն, պուտ մը ջուր կիտա, դձեռք կը բռնե, տանն թալե մաղարա մե, գուր աղջիկ կը հագու, խալու, կէնն հարսնցու, ու կէրթան: Կէրթան, կէրթան՝ կը հասնին թագավորի քաղաք, հարսնիք կէնին, զաղջիկն ու տղեն կը պսակին, յոթ օր, յոթ գիշեր կուտին, կը խմին, քեֆ-ուրախութեն կէնին:

Աղքատ մարդու մե յոթ քոռ աղջիկ կէղնի: Էդ մարդ օր մե դելնա կէրթա դաշտ, ցախ ու մախ կը ժողվե, օր տանն ծախե, ուր աղջըկներուն հացի փարա հասու: Կը մտնա մաղարե մե, կը տեսնա՝ քոռ աղջիկ մը լե քընկուկ է էդ տեղ, ուրին-ուրին կըսե.

— Յոթ քոռ աղջիկ ունիմ, իդա լե կը տանիմ, թըղ էղնի ութ, հալբաթ աստված ըդրա խամաթ լե կը հասու: Հըլա էրթամ իմ աղջըկներուն լե ըսիմ, տեսնամ ի՛նչ կըսին, նոր գամ տանիմ:

Աղջիկներ կըսին.

— Է՛դ էր պակաս, մենք կոցանք ապրանք՝ էդ լե դա զմեր խամաթ կտրե:

Պզտիկ աղջիկ կըսե.

— Պապե ջան, պապե, գնա րի՛, իմ փայ հացի կես կիդամ ընդրան, խեղճ է, շէղնի մնա էնտեղ, անտիրական մեռնի:

Էդ մարդ չբերե զաղջիկ, կը թողե կէրթա ուր տուն: Աղջիկ շատ գիլա, քարե կարկըտի պես արտըսունք կը թափե, շարա շէղնի: Ըդրա նշանած՝ թագավորի տղեն, էդ օր քելեր էր նեճիր կէներ, գիկա եք կշտովն օր գընցնա՝ լալու ձեն կը լսե, կը մտնա մաղարեն, կը տեսնա աղջիկ մե: Սատանեն կը մտնա ի խալը, կը մոտենա աղջկան ու կը թողե կէրթա: Աղջիկ կէրկուհոգովնա:

— Վա՛յ իմ գլխուն, իմ դրութեն ընծի հերք շէր, իդա խաղքութեն լե քելա՛վ իմ գլուխ: Մաղկատ կը զարկե ուր սիրտ, կսկծու քուն կը տանն, կը քնի: Քնու մեջ սըբ Սարգիս գիկա, կըսե.

— Մը վա՛խենա, էդ նեղութենեն կաղատվիս: Լուսուն ցախ ժողվող մարդ գիկա, օր զքըզի տանն ուր տուն, օր գիկա՝ խնդիրք

էրեւ, օր դըրզի տանե իդա մոտիկ յախպուր, էնտեղ էրկու յեղվընեկ դիկտն ջուր խմին, էրկու թերուր կը թալին յախպրի խեշ, կաննիս, կը թաթխիս մըջ ջրին, աշքերդի կը լվաս, կէղնիս յառեջվա պես:

Լուսմութն օր էղավ, մարդն էկավ, ըսեց.

— Յելի, լա՛ն, յելի, գձեռքդի բոնիմ տանիմ տուն: Յոթ քոռ աղջիկ ունիմ, դոս լե վըր ուրանց կէղնիք ութ, ընդոք իմալ ապրան, դու լե հետ, հալքաթ աստված դքու խսմաթ լե կիտա:

— Պապե ջան, խնդիրք կէնիմ քո յոտնեն՝ իդա տեղ մոտիկ յախպուր կա, դիսի տանիս, փշումե ջուր զարկիմ յերեսսի:

Մարդ զաղջիկ կը տանե յախպրի մոտ, աղջիկ զթերրներ կը թաթխե մըջ յախպրին, կը քսե աշքեր, կը լվացվի, աստծու հրամանքով կէղնի յառեջվա պես սըփ ու սաղ:

Գելնին գրնկնան ճամպա: Աղջիկ զաջ յոտքն օր կը թալե՝ օսկի կը թափի, ձախն օր կը թալե՝ արծաթ կը թափի: Մարդ հմա կը ժողվե ու դըլնա ուր տոպրակ: Էդ օր պապեն ցախի տեղ ջվալ մե օսկի ու արծաթ տարավ տուն: Պապո քեֆին քեֆ շըր հասնի: Յըմեն բան կաննի ուր աղջըկներուն: Պզտիկ աղջիկ կըսե.

— Պապե ջան, տեսա՛ր, ես շըսի՞ գնա գէն խեղջ աղջկան առ արի, ես իմ փայ հաց ընդրա հետ կը կիսիմ:

Մեծ աղջըկներ կըսին.

— Զմըզի լե պտի տանիս յախպրի մոտ, լվացվինք, մեր աշքեր բացվին:

Ին ամիս, ին օր, ին սհաթ, ին դախեն օր կը թըմի՝ թագավորի աղջիկ ծունկ կը դարկե դետին, խորոտիկ տղե մե կը բերե: Օր տղի յերես կը տեսնա՝ կը ծիծղա՝, օր կը ծիծղա՝ պապեի տան պատ ու յառիք կը ծածկըվին կարմիր վարդ ու ոեհանով: Պապեն կը զարմանա, դուր ու գրկեց գիմնան, գիկան թամաշա կէնին: Ձեն կը ցրվի մըջ գեղին, էդ դեղից մեկել գեղ, գեղերուց՝ քաղքըներ, հարի թագավորի քաղաք: Աղջկա նշանած՝ թագավորի տղեն լե գիմնա, շըք գրնկնա ուր սիրտ, էն մեկ օր ջառի աղջկան կըսե.

— Կնի՛կ, քու ձեն ցրվեր էր արար ախշարք, թե քու աջ յոտո թալիս՝ օսկի կը թափի, ձախ թալիս՝ արծաթ կը թափի, օր ծիծղաս՝ պատ ու յառիք վարդ ու ոեհանով կը ծածկըվին: Էդ ի՞մալ է, դքու օսկին ու արծաթ, դքու վարդ ու ոեհան շըտեսանք:

Զառին վրա կը հասնի, կըսե.

— Թագավորի տղա, ընդրան լե վախտ ու սըրա կա, խո յըմնօր էդ բան շէղնի, տեսար օր օր մը լե քու պատ ու յառիք շարվան վարդ ու ոեհան:

Տղեն կը միամտի: Զադու ջառին կը տեսնա, օր ուր փրուզեն օր մե չէ օր մե պտի բացվի՝ զոր կիտա փարին, կը ճամպե պապեի տուն, փունջ մե վարդ կը բերե. Թագավորի տղեն օր կէրթա դուս, կը շարե պատերուն, աղջկան կըսե.

— Ծա կէրթամ զթագավորի տղեն կանչիմ: Եբ չիգա, զոտքն օր կը թալե շեմքով ներս, դու հմա ծիծղա, գնա չառջե ու զվարդեր ցուցու: Մարդ ի՞նչ գիմնա կնկա ֆել ու ֆանդ: Բան է՝ զընցնա կէրթա:

Թագավորի տղեն գիկա, զվարդեր կը տեսնա, չըմեն թոռմըշուկ, չավտընա:

Պապեի տուն կը դառնա ըխտատեղի: Զորս դիեն կիգան թամաշի, օրական տաս մարդ կը մտնա, քսան մարդ գելնա, թե բան մե լե օղորդ է՝ տաս լե կը դնին վրեն:

Զեն կէրթա հասնի թագավորի տղին: Տղեն զուր խըլըխ կը փոխե, կէրթա պապեի տուն, կը տեսնա, օր ի՞նչ՝ պապեի տան պատ ու չառիք ծեփ վարդ ին շարուկ: Աղջիկն օր կը ծիծղա՝ հին վարդեր կը թափին, թաղեք գելնան տեղ, զաջ չոտքն օր կը թալե՝ օսկի կը թափին, ձախն օր կը թալե՝ արծաթ կը թափին, զպզտիկ տղեն օր կը տեսնա աղջկա գիրկ, սիրտ կը քուս, ինչ օր զուր սիրտ ճղեն՝ զտղեն դնեն մըջ ուր սրտին:

Թագավորի տղեն զաղջիկ կառնե հարց ու փորձ: Աղջիկ լե զուր զլսուու դալած թարիֆ կէնե, թե ինք վի՛ր աղջիկն է, թե ի՛մալ հեռու էրկրեն գինք չուզեցին տարան, ճամպեն ի՛մալ ծառվըցավ, ջառին ի՛մալ պուտ մե ջրի համար զուր աչքեր հանեց, թալեց զինք մազադե մե, թե ի՛մալ մարդ մե էկավ, զուր չերես սեցուց, մոտեցավ ուրին, ինք ծոցվորավ, թե ի՛մալ սըբ Սարգիսն էկավ ուրին էրազ, չախարի ջրով լվացվավ, աչքերն աղեկցան՝ պապեն վերուց բերեց տուն, պահեց, պաշտպանեց ուր ավլատի պես:

Թագավորի տղեն հմա կը հասնի զաղջկա ճակատ կը պագե, տղեն կառնե գիրկ, կուրախնա, կըսե.

— Աղջի՛, ըշտե ես թագավորի տղեն իմ, դու իմ նշանածն իս: Զադու ջառին հմալ օր քու զուր իդա օյին խաղցեր է՝ էն հմալ լե հարի չըսօր գիսի խաբեր է: Դե, չելի էրթանք:

Թագավորի տղեն կառնե զուր կնիկն ու տղեն, կը տանե տուն: Զառին ու ուր աղջիկ կը կապե կատողուկ ձիանու պոչեր՝ կը թողե սար ու ձոր, կէղնին շնաստակ, ջուն ու ջանավարի փայ:

Սըբ Սարգիսն հասնի չըմեն նեղածին, իլայի հեքաթ ըսողին, լսողին ու անկաջ էրողին: